**ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Երևանի պետական համալսարանի իրավաբանական
ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող

# ՊԱՏԵՐԱԶՄ ՎԱՐԵԼՈՒ ԱՐԳԵԼՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐ

Եթե պատերազմ վարելու արգելված միջոցներ ասելով հասկանում ենք, թե ինչ գենք, զինատեսակներ չի կարելի օգտագործել, ապա պատերազմ վարելու արգելված մեթոդն իրենից ներկայացնում է պատերազմ վարելու միջոցների օգտագործման և կիրառման կարգը: Ուստի գտնում ենք, որ պատերազմ վարելու արգելված մեթոդը սահմանված նպատակին հասնելու համար պատերազմ վարելու միջոցների օգտագործման տարբեր եղանակներ են, այն, թե ինչ եղանակով չի կարելի հասնել սահմանված նպատակին:

Պայքարի միջոցներն ու մեթոդներն այսօր էականորեն տարբերվում են անցյալում կիրառված միջոցներից ու մեթոդներից, սակայն ոչ թե լավ առումով, որ սկսել են ավելի մեղմ միջոցներ ու մեթոդներ կիրառել, այլ այն պատճառով, որ գնալով ավելի սարսափելի վնասներ ու ավերվածություններ ստեղծող միջոցներ են օգտագործում, արգելված մեթոդներ կիրառում:

Իրավաբանական գրականության մեջ հաճախ նշվում է, որ պատերազմ վարելու մեթոդները հիմնված են երեք հիմնարար սկզբունքների վրա՝ խտրականության արգելման, ավելորդ տառապանք չպատճառելու, ոխտադրժության արգելման[1], սակայն, երբ նշված սկզբունքներից որևէ մեկը խախտվում է, ապա կիրառված մեթոդը համարվում է արգելված:

Պատերազմ վարելու մեթոդները լինում են արգելված և ոչ արգելված, թեպետև որոշ հեղինակներ առաջադրում են նաև մասնակի արգելված մեթոդներ[2]: Այդ մեթոդները վերաբերում են ցամաքային, օդային և ծովային պատերազմներին:

Պատերազմ վարելու արգելված մեթոդները շատ են, որոնք ամրագրված են մի շարք միջազգային իրավական ակտերում, սակայն, կախված նրանից, թե այդ մեթոդներից յուրաքանչյուրը կոնկրետ ինչ օբյեկտի դեմ է ուղղված, մենք, տալով տեսական դասակարգում, առաջարկում ենք հետևյալ երեք խմբերը՝

1.պատերազմ վարելու արգելված մեթոդներ, որոնց կիրառումն անմիջականորեն ուղղված է անձի դեմ,

2.պատերազմ վարելու արգելված մեթոդներ, որոնց կիրառումն անմիջականորեն ուղղված է նյութական արժեքների դեմ,

3.պատերազմ վարելու արգելված մեթոդներ, որոնք ունեն ոչ ընտրողական բնույթ, որոնց կիրառումն անմիջականորեն ուղղված է և/կամ անձի, և/կամ նյութական արժեքների, և/կամ շրջակա միջավայրի դեմ:

Անձի դեմ ուղղված պատերազմ վարելու արգելված մեթոդներ ասելով՝ հասկանում ենք այնպիսի արգելված մեթոդներ, որոնք անմիջականորեն ուղղված են անձի դեմ, այսինքն՝ անձի կյանքի, առողջության դեմ, որոնց կիրառման ժամանակ անձը ֆիզիկական և/կամ հոգեբանական տանջանքների է ենթարկվում: Այդպիսի արգելված մեթոդներից են՝ բանագնացին սպանելու կամ վիրավորելու արգելումը, գթության մերժման արգելումը, շարքից դուրս եկած անձին սպանելու, վիրավորելու արգելումը, բաղաքացիական անձանց, խաղաղ բնակչության վրա հարձակման արգելումը և այլն:

*Սովահարության արգելում.* Սովահարությունը՝ որպես պատերազմ վարելու արգելված

մեթոդ, դեռևս հնագույն ժամանակներից է կիրառվել: Առաջին լրացուցիչ արձանագրության 54-րդ և Երկրորդ լրացուցիչ արձանագրության[3] 14-րդ հոդվածների համաձայն՝ արգելվում է քաղաքացիական բնակչության շրջանում սովն օգտագործել որպես պատերազմելու մեթոդ: Իսկապես, սա անմարդկային քայլ է, որը նաև խախտում է մարդասիրական իրավունքի՝ ըստ անհատների սահմանափակման սկզբունքը[4]:Սրա հետ կապված հարց է ծագում, եթե, օրինակ, մի կողմի իշխանությունները շրջափակման մեջ են վերցնում որոշակի տարածք և արգելում ելքն ու մուտքը այդ տարածք, որի արդյունքում շրջափակվածները զրկվում են հիմնական սննդամթերքից, ապա այստեղ կիրառվե՞ց սովահարության դիմելու մեթոդը, թե՞ ոչ[5]:

Մեր կարծիքով այս դեպքում չի կարելի մեղադրել այդ կողմին սովը որպես պատերազմ վարելու արգելված մեթոդ օգտագործելու համար, քանի որ այս արարքի օբյեկտիվ կողմը՝ հարձակվել, ոչնչացնել, դուրս տանել այն օբյեկտները, որոնք անհրաժեշտ են քաղաքացիական բնակչության գոյատևման համար, օրինակ՝ սարեների սպաշարները, պարեն արտադրող գյուղատնտեսական շրջանները, ցանքերը և այլն, այստեղ առկա չէ, և, բացի այդ էլ, Առաջին լրացուցիչ արձանագրության 54-րդ հոդվածի Երկրորդ կետի համաձայն՝ այդ արգելքները չեն կիրառվում բացառապես զինված ուժերի անձնակազմի գոյության պահպանման, այլ նպատակների, ռազմական գործողությունների ուղղակի պաշտպանության համար:

Սակայն պետք է նշել, որ եթե այդ քայլերը հանգեցնում են նրան, որ բնակչության շրջանում սով է առաջանում կամ բնակչությունը հարկադրված մեկնում է, թողնում իր տարածքները, ապա այստեղ առկա է սովահարության դիմելու արգելված մեթոդը: Հետևապես, պարտադիր չէ, որ անձը գանվի սովահար վիճակում, պարզապես, եթե պարենի պաշարները, խմելու ջրի մատակարարման կառույցները դիտավորությամբ փչացնում, ոչնչացնում են, որի նպատակն այն է, որ բնակչությունը չկարողանա օգտվել դրանցից, և բնակչությունն էլ, հակառակորդի կողմից հիշյալ օբյեկտների շարքից դուրս բերելուց հետո, անմիջապես լքում է տարածքն այն պարզ պատճառաբանությամբ, որ այլևս հնարավոր չէ մնալ, չկան նվազագույն կենսապայմաններ, և կարևոր չէ նաև այն, որ բնակչությունը նման պայմաններում ընդամենը մի քանի ժամ է մնացել, միևնույն է, այս պարագայում թշնամու կողմից կիրառվեց սովահարության՝ որպես պատերազմ վարելու արգելված մեթոդը:

*Աղետի ենթարկված թռչող ապարատից անկարգելով իջնող անձանց վրա օդում գտնվելու ժամանակ հարձակման արգելում.* Այս մեթոդն առաջին անգամ ամրագրվել է «Օդային պատերազմի վարման կանոնների մասին» 1923թ. վաստակաթղթում, որն այդպես էլ իրավաբանական ուժ չստացավ: Համաձայն սրա 20-րդ հոդվածի՝ եթե ինքնաթիռն աղետի ենթարկվում է օդում գտնվելու ժամանակ, ապա ինքնաթիռը անկարգելով լքողները չեն կարող հարձակման օբյեկտ դառնալ մինչև գետնին հասնելը:

Սակայն, մեր կարծիքով, «մինչ գետնին հասնելը հարձակման օբյեկտ չեն կարող դառնալ» արտահայտությունը սխալ է, քանի որ ըստ հոդվածի՝ ստացվում է, երբ վայրէջք կատարեցին, նրանց կարելի է սպանել: Այդ հոդվածում անհրաժեշտ է ավելացնել, որ հարձակման թիրախ չեն հանդիսանա, եթե վայրէջք կատարելուց հետո հանձնվեն կամ թշնամական որևէ գործողություն չձեռնարկեն:

Այս արգելված մեթոդն ամրագրված է նաև Առաջին լրացուցիչ արձանագրության 42-րդ հոդվածում, համաձայն որի՝ աղետի ենթարկվող թռչող ապարատից անկարգելով թռչող ոչ մի անձ հարձակման չպետք է ենթարկվի իր վայրէջքի ընթացքում:

Աղետի ենթարկվող թռչող ապարատից անկարգելով թռչող, հակառակորդ կողմից վերահսկվող տարածքում վայրէջք կատարած անձին հնարավորություն է տրվում գնալ հանձնվել՝ մինչև նա հարձակման օբյեկտ կդառնա[6]:

Սակայն եթե ակնառու է, որ վերջինս թշնամական գործողություններ է կատարում, ապա նրան կարելի է դիտարկել որպես մարտիկ՝ դրանից բխող հետևանքներով հանդերձ:

Եթե անձը վիրավորված է, բայց շարունակում է կռվել, ապա նա չի ընկնում horse de combat-ի հովանավորության ներքո և նրան կարելի է սպանել: Այն պարզ պատճառաբանությամբ չի կարելի սպանել աղետի ենթարկված թշնամի ապարատից անկարգելով իջնող անձանց, քանի որ վերջիններս համարվում են շարքից դուրս եկած (horse de combat)[7], իսկ շարքից դուրս եկած է համարվում այն անձը, որը գտնվում է գիտակցությունը կորցրած վիճակում կամ որևէ ձևով շարքից դուրս է եկել վիրավորվելու կամ հիվանդության հետևանքով և այդ պատճառով ընդունակ չէ պաշտպանվելու, պայմանով, որ ցանկացած այդպիսի դեպքում այդ անձը ձեռնպահ է մնում որևէ թշնամական գործողությունից և չի փորձում փախչել:

*Ոխտադրժության արգելում.* Այս արգելված մեթոդն իր ամրագրումն է ստացել Ցամաքային կոնվենցիայում, համաձայն որի՝ արգելվում է հակառակորդի բնակչությանը կամ զորքերին պատկանող անձանց դավաճանաբար սպանելը կամ վիրավորելը:

Այս մեթոդի մասին է նշվում նաև Ծովային կոնվենցիայի 15-րդ, Առաջին կոնվենցիայի 53-րդ, Երկրորդ կոնվենցիայի[8] 45-րդ, Առաջին լրացուցիչ արձանագրության 37-39-րդ, 85-րդ հոդվածներում:

Մարդասիրական իրավունքը արգելում է հակառակորդին սպանել, վիրավորել կամ գերի վերցնել՝ դիմելով ոխտադրժության:

Իսկ ի՞նչ է իրենից ներկայացնում ոխտադրժությունը:

Ոխտադրժություն են համարվում այն գործողությունները, որոնք նպատակամղված են հակառակորդի մոտ վստահություն առաջացնելու և ստիպել հավատալու, որ վերջինս պաշտպանության իրավունք ունի, սակայն նպատակ ունենալով խաբել՝ այդպիսի վստահությունից օգտվելով:

Մեր կարծիքով վստահության չարաշահումը ինքնին հանցավոր արարք չէ, սակայն երբ դրա հետևանքով սպանություն կամ մարդասիրական իրավունքով արգելված որևէ այլ վնաս է պատճառվում, այդ դեպքում նոր վստահության չարաշահումը կհանդիսանա հանցագործություն:

Ոխտադրժության օրինակներ են հանդիսանում հաշտության դրոշի ներքո բանակցություններ վարելու մտադրություն կամ կապիտուլացում ձևացնելը, վիրավորվելու կամ հիվանդության հետևանքով շարքից դուրս գալ ձևացնելը, քաղաքացիական անձի կամ ոչ մարտիկի կարգավիճակ ունենալ ձևացնելը, Միավորված ազգերի կազմակերպության, չեզոք պետությունների կամ ընդհարման կողմ չհանդիսացող այլ պետությունների նշանների, խորհրդանշանների կամ համազգեստի օգտագործման միջոցով պաշտպանություն տրամադրող կարգավիճակ ունենալ ձևացնելը:

Պրոբլեմային հարց է այն, թե ինչպես զանազանել քաղաքացիական հագուստով կռվողներին, օրինակ՝ պարտիզաններին, որոնք մարտիկ են, իրավաբանորեն արգելված ոխտադրժությունից, այսինքն՝ խոսքը վերաբերում է Առաջին լրացուցիչ արձանագրության 37-րդ հոդվածով նախատեսված ոխտադրժությանը, որը նման քայլ է նախատեսում քաղաքացիական անձի կամ ոչ մարտիկի կարգավիճակ ունենալ ձևացնելը:

Սրա հետ կապված մեկ այլ հարց ևս պետք է ուսումնասիրել, նա, ով քաղաքացիական անձ է ձևանում, արդյոք դա չի հակասում այն դրույթին, որ մարտիկի պարտականությունն է հանդիսանում մշտապես տարբերակել իրեն ոչ մարտիկից, քանի որ մարտիկը պետք է պատշաճ վարքագիծ դրսևորի: Մարտիկի վարքագիծը պետք է համահունչ լինի մարդասիրական իրավունքի նորմերին[9]:

Հետաքրքիր է հետևյալ օրինակը, կոմբատանտը, Կարմիր խաչի մերենայով փախուստի դիմելով, փրկվում է գերությունից[10]: Արդյո՞ք սա ոխտադրժություն է:

Մեր կարծիքով՝ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը խախտվում են այս

պարագայում, բայց դա այնպիսի լուրջ խախտում (stricto sensu) էլ չէ: Հիմք ընդունելով Առաջին լրացուցիչ արձանագրության 85-րդ հոդվածի 3-րդ կետը՝ կարելի է ասել, որ դա այնպիսի արարք չէ, որ համարվի լուրջ խախտում, սակայն այդ նույն մեքենայով հակառակորդի վրա հարձակվելու ժամանակ այն կհամարվի լուրջ խախտում:

Մեկ այլ հետաքրքիր օրինակ է նաև հետևյալը. Նյուրնբերգի ռազմական տribունալը Սկորցենի գործով կայացված վճռում գերմանական սպաների կողմից հակառակորդի ռազմական հագուստը օգտագործելով՝ ռազմական օբյեկտ գրավելու համար պատասխանատվություն չսահմանեց վերջիններիս համար, իսկ այդ նույն հագուստով մարտիկ բռնելու համար պատասխանատվություն սահմանեց[11]:

Նյութական արժեքների դեմ ուղղված պատերազմ վարելու արգելված մեթոդներ ասելով՝ հասկանում ենք այնպիսի մեթոդներ, որոնք անմիջականորեն ուղղված են նյութական արժեքների դեմ, օրինակ՝ մասնավոր և պետական գույքի ոչնչացում, բռնագրավում, միջազգայնորեն ընդունված տարբերանշանների ոչ պատշաճ օգտագործում, շինությունների ավերում, մշակութային օբյեկտների ոչնչացում և այլն:

*Միջազգայնորեն ճանաչված խորհրդանշանների չարաշահման արգելում.*

Արգելվում է ոչ պատշաճ օգտագործել միջազգայնորեն ճանաչված խորհրդանշանները: Դրանք են Կարմիր խաչի, Կարմիր մահիկի, Կարմիր առյուծի և արևի, Կարմիր բյուրեղի, քաղաքացիական բնակչության պաշտպանության, մշակութային արժեքների պաշտպանության, Ժնևի կոնվենցիաներով նախատեսված տարբերանշանները, ազդանշանները:

Մեր կարծիքով՝ այդպիսի նշանների ոչ պատշաճ օգտագործումն արգելված է հետևյալ հանգամանքներում՝

1. հարձակումների, զինված գործողությունների ժամանակ,

2. եթե այն ծառայում է նրա համար, որպեսզի խանգարեն ռազմական գործողություններին:

Հակառակորդին դիտավորությամբ մոլորության մեջ գցելու նպատակով պաշտպանական նշանի օգտագործումը, օրինակ՝ Կարմիր խաչի պաշտպանության ներքո ռազմական առաջխաղացումը կամ զենքի փոխադրումը Կարմիր խաչի նշանը կրող շտապ օգնության մերենայով կամ նմանատիպ փոխադրամիջոցով, ոխտադրժություն է:

Սա չափազանց լուրջ խախտում է[12], քանի որ խորհրդանշանի չարաշահումը խաթարում է նրա պաշտպանիչ ուժի նկատմամբ հավատը և կարող է հանգեցնել նրա պաշտպանական նշանակության կորստին նույնիսկ այն կառույցների, փոխադրամիջոցների և անձանց համար, որոնք նշանը կրում են օրինականորեն:

Փորձը ցույց է տալիս, թե որքան դժվար է վերականգնել խաթարված վստահությունը, նամանավանդ պատերազմի պայմաններում, երբ իշխում են կասկածամտությունը, ատելությունն ու արհամարհանքը:

Իսկ ի՞նչ ենք հասկանում խորհրդանշանի ոչ ճիշտ օգտագործում ասելով:

Մեր կարծիքով խորհրդանշանի չարաշահման հետևյալ երեք ձևերը կան՝

1. նմանակում, այսինքն՝ այնպիսի նշանի օգտագործում, որն իր ձևի և/կամ գույնի պատճառով կարող է շփոթվել խորհրդանշանի հետ,

2. ոխտադրժություն, օրինակ՝ խորհրդանշանի օգտագործումը զինված ընդհարման ժամանակ մարտիկներին կամ ռազմական օբյեկտները պաշտպանելու նպատակով,

3. բռնատիրում, այսինքն՝ խորհրդանշանի օգտագործումը նման իրավունք չունեցող մարմինների կամ անձանց կողմից, օրինակ՝ առևտրական ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների, դեղագործների, բժիշկների կամ պարզապես անհատների կողմից: Բռնատիրում պետք է համարել նաև այն, երբ խորհրդանշանն օգտագործելու իրավունք ունեցող անձինք այն չեն օգտագործում կոնվենցիաներին և լրացուցիչ արձանագրություններին համապատասխան:

Ոչ ընտրողական և շրջակա միջավայրի

անվտանգության դեմ ուղղված պատերազմ վարելու արգելված մեթոդներ՝ ասելով հասկանում ենք պատերազմ վարելու այնպիսի արգելված մեթոդներ, որոնք ունեն ոչ ընտրողական բնույթ, գուգորդվում են մեծ ավերածություններով, կարող են ուղղված լինել և/կամ անձի, և կամ նյութական արժեքների, և/կամ շրջակա միջավայրի դեմ:

Քանի որ մարդասիրական իրավունքի նպատակը ռազմական անհրաժեշտության և մարդկային սիրալիրության միջև հավասարակշռություն ապահովելն է[13], ուստի այսպիսի պայմաններում լիովին դատապարտելի են ոչ ընտրողական բնույթի հարձակումները:

*Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության արգելում.* Եթե Հաագայի կոնվենցիան ամրագրում է, որ զինված ընդհարման ժամանակ արգելվում է պատերազմելու անսահմանափակ մեթոդներ և միջոցներ կիրառել և արգելվում է այնպիսի մեթոդներ և միջոցներ կիրառել, որոնք կարող են ավելորդ վնասներ կամ տառապանքներ պատճառել, ապա Առաջին լրացուցիչ արձանագրությունը դրանց ավելացրեց նաև այն, որ արգելվում է կիրառել պատերազմելու այնպիսի միջոցներ և մեթոդներ, որոնք նպատակ ունեն շրջակա միջավայրին պատճառել, կամ, կարելի է ենթադրել, որ կպատճառեն լայնածավալ, երկարատև և լուրջ վնաս: Լայնածավալ վնաս ասելով՝ հասկանում ենք, որ վնասը մեծ տարածքներ է ընդգրկել, ուղղված է եղել շրջակա միջավայրի մեկից ավելի օբյեկտների կամ մեկ օբյեկտի տարբեր բաղադրատարրերի դեմ:

Լուրջ վնաս ասելով՝ հասկանում ենք, որ շրջակա միջավայրին պատճառված վնասը բացասական անդրադարձ կունենա մարդու, կենդանական և բուսական աշխարհի վրա, և որ առաջացած բացասական հետևանքները հաղթահարելու համար լուրջ ներդրումներ, հսկայածավալ աշխատանք կպահանջվեն:

Երկարատև վնասը արգելված մեթոդի գործադրման հետևանքով առաջացած բացասական հետևանքը վերացնելու համար անհրաժեշտ ժամանակահատվածն է: Պարտադիր չէ, որ այդ ժամանակահատվածը մի քանի տասնամյակ տևի[14], այն կարող է և մի քանի տարի տևել, սակայն այդ վնասը անմիջապես վերացնող հնարավորություն չպետք է լինի: Օրինակ՝ որ տնկված թեկուզև 1000 ծառի առկայությունը չի վկայում այդտեղ անտառի գոյությունը, այլ տնկված ծառերը միայն 50 տարի հետո են դառնում անտառ, և այսպիսի պայմաններում, եթե անտառ է ոչնչացվել, հետևապես նրա բացասական հետևանքները կհաղթահարվեն տասնամյակների ընթացքում:

Բնական միջավայրը համարվում է քաղաքացիական օբյեկտ և որպես այդպիսին պաշտպանվում է նույն սկզբունքներով և նորմերով, որոնք պաշտպանում են այլ քաղաքացիական օբյեկտները, մասնավորապես տարբերակման և համաչափության սկզբունքներով: Դա նշանակում է, որ բնական միջավայրի և ոչ մի տարր չի կարող հարձակման օբյեկտ դառնալ, եթե այն ռազմական օբյեկտ չէ, և որ արգելվում է հարձակվել ռազմական օբյեկտի վրա, եթե, ինչպես ապասվում է, որ այդ հարձակումը կարող է ուղեկցող այնպիսի վնաս հասցնել բնական միջավայրին, որ չափից ավելի մեծ կլինի ենթադրաբար ապասվելիք կոնկրետ և անմիջական ռազմական առավելության նկատմամբ:

Արգելվում է ռազմական նպատակների համար օգտագործել արհեստականորեն առաջացրած երևույթներ՝ երկրաշարժ, ցունամի, էկոլոգիական հավասարակշռության խախտում, եղանակի փոփոխություն[15]:

Ռազմական գործողությունների վարման ընդհանուր սկզբունքները կիրառվում են նաև շրջակա միջավայրի նկատմամբ:

Պատերազմի վարման մեթոդներն ու միջոցներն օգտագործելիս պետք է պատշաճ կերպով հաշվի առնվի շրջակա միջավայրի պաշտպանությունն ու պահպանությունը:

Ռազմական գործողություններ իրականացնելիս պետք է ձեռնարկվեն նախազգուշական բոլոր հնարավոր միջոցները՝ խուսափելու շրջակա միջավայրը պատահական վնասելուց կամ, համենայն դեպս, այդ վնասը հասցնելու

նվազագույնի[16]:

*Ռազմական փոխճնշման կիրառման արգելքում.* Ռազմական փոխճնշման նպատակը օրինախախտ պետությանը ստիպելն է, որ վերջինս իրավախախտումներ չանի, պահպանի պատերազմի օրենքներն ու սովորությունները, առաջնորդվի մարդասիրական իրավունքի նորմերով:

Կան երկու հիմնական պայման, որպեսզի կիրառված ռեպրեսալիան համարվի իրավաչափ՝

1. նախազգուշական միջոցներ ձեռնարկելը,
2. համաչափության սկզբունքը պահպանելը, այսինքն՝ կիրառված քայլերի և սպասվելիք հետևանքների համաչափ լինելը[17]:

Այս մեթոդի դիմում է այն կողմը, որն ինքը չի հանգեցրել այդպիսի իրավիճակի, այլ կերպ ասած՝ ենթադրյալ զոհն է: Մեր կարծիքով՝ իրավաչափության և ոչ մի տարր իր մեջ չի պարունակում այս մեթոդը և այն կարելի է համեմատել «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» սկզբունքի հետ և դրանով հանդերձ վերջինս անընդունելի, հակաբարոյական ևնք համարում:

Ճիշտ է, մարդասիրական իրավունքը թույլատրում է, ռազմական անհրաժեշտությունից դրդված, որոշակի քայլերի դիմել, որոշակի մեթոդներ կիրառել, սակայն ռազմական անհրաժեշտությունը պետությունների համար այսօր հնչում է որպես ռազմական հարմարություն՝ դրանից ելնելով կատարելով իրենց անօրեն արարքները՝ կեղծ բարեպաշտության տակ քողարկված:

Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը կատարելու, պահպանելու հարցում պետությունները քաղաքական կամք չեն դրսևորում, այնինչ անձի պաշտպանությունը միջազգային մարդասիրական իրավունքի անկյունաքարն է: Այսօրվա իրականությունը պարտադրում է առավել զգոն լինել պատերազմների ժամանակ, քանի որ մարդն ունակ է և բարին արարել, և չարիք գործել:

Մեր կարծիքով՝ անհրաժեշտ է մարդասիրական իրավունքի վերաբերյալ սեմինար-պարապմունքներ անցկացնել, որպեսզի բնակչությունը իրազեկ լինի մարդասիրական իրավունքին, նրա էության, սահմանափակումներին ու արգելքներին, ուսումնական հաստատություններում պետք է համապատասխան առարկա ուսուցանվի, հատկապես բարձրագույն զինվորական հաստատություններում պետք է աջակցորեն մոտենան դրան, քանի որ կարևոր է զինված ուժերում ուսուցում կազմակերպելը, զինվորների իմացության աստիճանը բարձրացնելը, շատ է կարևորվում հատկապես զինվորների հետ տարվող աշխատանքը այս ուղղությամբ, գիտաժողովներ պետք է անցկացվեն, քննարկվեն արդի հիմնախնդիրները:

Անհրաժեշտ է ավելի շատ տեղեկություններ տարածել Կարմիր խաչի, Կարմիր մահիկի, Կարմիր բյուրեղի սխալ գործածության վերաբերյալ, ինչպես նաև այն հետևանքների մասին, որ խաղաղ պայմաններում տարբերանշանի սխալ օգտագործումը կարող է վատ հետևանք թողնել հնարավոր պատերազմական իրավիճակում:

---

[1] Տես Antonio Cassese, International law, New York, 2005, p. 795.

[2] Տես Քոչարյան Վ. Միջազգային իրավունք, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2002թ., էջ 274:

[3] Տես Այսուհետ Առաջին լրացուցիչ արձանագրության («Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին» 1949թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների լրացուցիչ արձանագրություն) և Երկրորդ լրացուցիչ արձանագրության («Միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին» 1949թ օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների լրացուցիչ արձանագրություն):

[4] Տես Ժան Պիկտե, Միջազգային մարդասիրական իրավունքի զարգացումն ու սկզբունքները. ԿԻՄԿ, Երևան, 2000թ., էջ 80:

[5] Տես Perspectives on the ICRC study on customary international humanitarian law, UK, Cambridge, 2007, p. 246

[6] Տես Perspectives on the ICRC study on customary international humanitarian law, UK, Cambridge, 2007, p. 242.

[7] Տես Perspectives on the ICRC study on customary international humanitarian law, UK, Cambridge, 2007, p. 241.

Ամփոփելով վերոշարադրյալը՝ ցանկանում ենք մարդկությանն ուղղել հետևյալ խոսքերը. եկեք չառաջնորդվենք «ջունգլիների օրենքով», «Մարդը մարդու համար գայլ է» (լատ.Homo homini lupus ), «վայ պարտվողին» (լատ. vae victis) սկզբունքներով, այլ «Սիրիր թշնամուդ», «Խաղաղություն և սեր բանական էակների միջև» սկզբունքներով:

Բոլորիս պետք է միավորի և ուղղորդի համամարդկային այն մեծ ուժը, որը մարդասիրությունն է կոչվում:

---

[8] Այսուհետ Ծովային կոնվենցիա («Ծովային պատերազմի ժամանակ պատերազմող կողմերի միջև հարաբերությունները կարգավորող օրենքների մասին» կոնվենցիա), Առաջին կոնվեցիա («Գործող բանակում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» կոնվենցիա), Երկրորդ կոնվենցիա («Ծովում գինված ուժերի վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին» կոնվենցիա):

[9] Տես Malcolm N. Shaw.International law, Fifth edition. UK, Cambridge, 2005, p. 1063.

[10] Տես Эрик Давид. Принципы права вооруженных конфликтов. Москва, 2000. С. 297.

[11] Տես Эрик Давид. Принципы права вооруженных конфликтов. Москва, 2000. С. 296.

[12] Տես Dieter Fleck. The handbook of humanitarian law in armed conflicts. GB. Oxford. 2007. p.472

[13] Տես Laura Perna. The formatrion of the treaty on non-international armed conflicts. Boston. 2006. p. 1.

[14] Տես Ограничение методов и средств ведение войны. Фрш. С. 4.

[15] Տես Тункин И.И. Международное право. М., 1994. С. 494.

[16] Տես Эрик Давид. Принципы права вооруженных конфликтов. Москва, 2000. С. 296.

[17] Տես Dieter Fleck. The handbook of humanitarian law in armed conflicts. GB. Oxford. 2007. p.205.